# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

## ՀՐԱՄԱՆ №81

«04» 10 2022 թ. ք. Երևան

### ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Վաղինակ Հրաչիկի Ջանազյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և վերջինիս պարտականությունների կատարումը նույն վարչության պետի տեղակալ Գուրգեն Գագիկի Մադոյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 2022 թվականի սեպտեմբերի 29-ի՝ N 352-Ա և 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 358-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել Վաղինակ Ջանազյանի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Գուրգեն Մադոյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Պողոսյան Արթուր - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,

***Հանձնախմբի անդամներ՝***

Հակոբյան Սամվել - ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ,

| | |
|---|---|
| Մեժլումյան Միեր - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետի պաշտոնակատար, |
| Ղահրամանյան Մարուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար, |
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ, |
| Գևորգյան Թամարա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար, |
| Սարիբեկյան Մելանյա - | ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աջակցող բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 14-ը:

**Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**